ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «31» _հունվարի 2012 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 05-Ա/Ք

«ԳՊԿ-ՌՀԳՀ-2011» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության համակարգում գործող գիտության պետական կոմիտեի կանոնադրության 12 կետի 1-ին ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել՝

1) «ԳՊԿ-ՌՀԳՀ-2011» մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված գիտական թեմաների իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցությայն գումարների օգտագործման մասին պայմանագրի ձևը՝ համաձայն հավելված N 1-ի,
2) վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի,
3) գիտահետազոտական աշխատանքների կատարման մասին պայմանագրի ձեւը՝ համաձայն հավելված N 3-ի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Նախագահ՝ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2012 թ. հունվարի 31-ի
05- Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ «ԳՊԿ-ՌՀԲՀ-2011» ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան «____» _____ 2012 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի (այսուհետ՝ Կոմիտե), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ի դեմս

_____

_____ -ի

(թեմայի ղեկավարի անուն, ազգանուն, պաշտոն, կազմակերպությունը, որտեղ այն կատարվելու է)

(այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Կոմիտեի և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի (այսուհետ՝ ՌՀԳՀ) միջև համագործակցության մասին 2011թ. փետրվարի 18-ի համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) և Համաձայնագրի շրջանակներում գիտական ծրագրերի մրցույթի անցկացման կարգը (այսուհետ՝ Կարգ),

_____

_____

(թեմայի անվանումը)

գիտական թեմայի (այսուհետ՝ Թեմա) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանգրով Կոմիտեն պարտավորվում է Թեմայի իրականացման նպատակով հատկացնել մինչև _____ գումար, իսկ Կատարողը պարտավորվում է Թեման իրականացնել Համաձայնագրով և սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Թեմայով նախատեսված՝ Կատարողի կողմից իրականացվելիք գիտական հետազոտությունների միջոցառումների (այսուհետ՝ Միջոցառում) կատարման փուլերի ժամկետները և ֆինանսավորման ծավալները որոշվում են առաջադրանքով, օրացուցային պլանով և Թեմայի նախահաշվով, որոնք սույն Պայմանագրի անբաժանելի մասն են (Հավելվածներ 1, 2 և 3):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել կատարելու սույն Պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները.

2.1.2. Կատարողից պահանջել աշխատանքը կատարել սույն Պայմանագրի 7-րդ կետում նշված ժամկետում.

2.1.3. չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ.

2.1.4. կատարել Թեմայի ղեկավարի փոփոխություն՝ Թեմայի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ կազմակերպության, որտեղ կատարվում է Թեման, գիտական (գիտատեխնիկական) խորհրդի միջնորդությամբ և Թեմայում ընդգրկված կատարողների համաձայնությամբ.

2.1.5. կատարել Թեմայի ֆինանսական նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարի վերաբաշխում, տարեկան մեկ անգամ՝ դրա 10 տոկոսի չափով.

2.1.6. կատարել Թեմայի կատարողների կազմում փոփոխություն՝ Թեմայի ղեկավարի միջնորդությամբ՝ համարժեք թեկնածության դեպքում.

2.1.7. դադարեցնել Թեմայի ֆինանսավորումը հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում՝ հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը լրանալու հաջորդող ամսից:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Կոմիտեի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Կոմիտեի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները.

2.2.3. Թեմայի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց.

2.2.4. Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1. ընդունել կատարված աշխատանքի արդյունքը Կարգի դրույթներին համապատասխան և վճարել դրա համար.

2.3.2. իրականացված Միջոցառման մասին ներկայացված տարեկան (ընթացիկ) և ամփոփ հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից 45 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Թեմայի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Կոմիտեն հաշվետվությունն ընդունելու դեպքում 5 աշխատանքային օրվա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կատարողին:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Թեման կատարել անձամբ.

2.4.2. Թեման կատարել Կոմիտեի կողմից հաստատված Թեմայի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սույն պայմանգրի 7-րդ կետում նշված ժամկետում.
2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Թեմայով և սույն Պայմանագրով սահմանված նպատակներով և չափաքանակներով.
2.4.4. կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել Կոմիտե.
2.4.6. սույն Պայմանագրով սահմանված կարգով Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին ընթացիկ (տարեկան) հաշվետվություններ, իսկ Թեմայի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն: Ընթացիկ հաշվետվությունը ներկայացվում է իրականացման ժամկետի սկզբից հաշված 11-րդ ամսվան հաջորդող ամսվա առաջին 10-օրյակում, իսկ ամփոփ հաշվետվությունը՝ Թեմայի իրականացման ավարտից առնվազն քսան օր առաջ.
2.4.7. ժամանակին Կոմիտե տեղեկացնել Հայաստանի Հանրապետությունից Թեմայի ղեկավարի կամ կատարողի տարեկան 2 ամսից ավել ժամկետով անընդհատ բացակայության, միջոցների ոչ նպատակային իրացման և այլ հանգամանքների մասին.
2.4.8. Թեմայի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
2.4.9. Թեմայի շրջանակներում իրականացված ցանկացած գիտական հրապարակման մեջ՝ ներառյալ զեկույցների թեզիսները, հեղինակները պարտավոր են հղում կատարել Թեմայի վրա՝ նշելով նրա ծածկագիրը:

3. **Թեմայի ֆինանսավորման չափը**

3.1. Թեմայի ֆինանսավորման չափը կազմում է _____ ՀՀ դրամ:
(թվերով և բառերով)

4. **Մոնիթորինգը**

4.1. Կոմիտեն Թեմայի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
4.2. Մոնիթորինգն իրականացվում է Կոմիտեի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:
4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:
4.4. Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է Թեմայի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Թեմային առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. **Վճարման կարգը և ժամկետները**

5.1. Կոմիտեն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կատարողից անկախ հանգամանքների հետևանքով:

5.2. Կոմիտեն Կատարողին վճարում է կանխավճար՝ սույն Պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև

_____

(թվերով և բառերով)

ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ՝ 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.3. Կոմիտեն Կատարողին սույն Պայմանագրով նախատեսված՝ մեկ տարվա կտրվածքով աշխատանքի վարձատրության համար հատկացված գումարի 8 տոկոսը վճարում է, եթե Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը Կոմիտեի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. **Կողմերի պատասխանատվությունը**

6.1. Սույն Պայմանագրով և Թեմայով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կատարողը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կատարողին վճարվելիք գումարներից:

7. **Պայմանագրի գործողության ժամկետը**

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է 2 (երկու) տարի ժամկետով:

8. **Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

9.2.1. Կատարողի կողմից Կոմիտե ներկայացված Թեմայի հայտը.

9.2.2. Առաջադրանքը (Հավելված 1).

9.2.3. Օրացուցային պլանը (Հավելված 2).

9.2.4. Թեմայի նախահաշիվը (Հավելված 3):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Կոմիտե	Կատարող
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե	_____ (պաշտոն, անուն, ազգանուն)
ք. Երևան, Կառավարական տուն 3 Հ/հ 900011033033 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	_____ (կազմակերպության անվանում) _____ (հասցեն) _____ (բանկային վավերապայման)
նախագահ՝ Ս. Հարությունյան	_____ (ստորագրություն)
_____ (ստորագրություն)	Ստորագրությունը հաստատում եմ: _____ (պաշտոն, անուն, ազգանուն) _____ (ստորագրություն)
Կ. Տ.	**Կ. Տ.**

Եթե Կատարողը քաղաքացի է, ապա _____
(անուն, ազգանուն)

_____
(հասցեն, սոց. քարտի համարը, անձնագրի սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

Հավելված 1

«_____» _____ 2012 թ.

N _____ պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

_____ թեմայի

(թեմայի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի 2012 թվականի հունվարի 31-ի թիվ 05-Ա/Ք հրաման:
2. Աշխատանքի նպատակը

   _____

   _____

   _____

   _____
3. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ)

Կոմիտե	Կատարող՝
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե նախագահ՝ Ս. Հարությունյան	_____ (անուն ազգանուն)
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

Հավելված 2
«_____» _____ 2012 թ.
N _____ պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

_____ թեմայի
(թեմայի անվանում)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման				
	անվանումը	համառոտ բովանդակությունը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ՝ համաձայն Պայմանագրի 5.2. կետի)
Ընդամենը					

Կոմիտե

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե
նախագահ՝ Ս. Հարությունյան

_____
(ստորագրություն)

Կատարող՝

_____
(անուն ազգանուն)

_____
(ստորագրություն)

Հավելված 3
«_____» _____ 2012 թ.
N _____ պայմանագրի

Թեմայի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում	
			01.01.2012թ.-30.12.2012թ	01.01.2013թ.-30.12.2013թ.
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ			
2	այլ ծախսեր, այդ թվում՝ 1. սարքեր և սարքավորումներ 2. նյութեր և գրենական պիտույքներ 3. գործուղումներ			
3	Ենթապայմանագրային համագործակցություն			
4	վերադիր ծախսեր			
5	ընդամենը			

Կատարող՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.

Հավելված N 2
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2012 թ. հունվարի 31-ի
05- Ա/Ք հրամանի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Երևան «_____» _____ 2012 թ.

«_____» ծածկագրով
«_____»
(թեմայի անվանում)
թեմայի ղեկավարը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս _____
_____և _____
(անուն, ազգանուն, հայրանուն) (կազմակերպության անվանումը)
(այսուհետ՝ Կատարող), ի դեմս _____
(տնօրեն/ռեկտոր անուն, ազգանուն)
որոնք գործում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի միջև համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում գիտական ծրագրերի մրցույթի անցկացման կարգի հիման վրա, կնքեցին պայմանագիրը հետևալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել սույն պայմանագրի 1.2 ենթակետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է գիտական կազմակերպության (բուհի) տնօրինությանը հանձնված գումարների և գիտական կազմակերպությունում առկա նյութեխնիկական միջոցների հաշվին ապահովել անհրաժեշտ պայմաններ՝ տարածք, էլեկտրականություն, ջրամատակարարում, ջեռուցում, կոմունալ սպասարկում, կապ, նյութատեխնիկական արժեքների պահպանում և այլն:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է «____»_____ թ. մինչև «____»_____ թ.:

1.4. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավորվում է՝

2.1.1 պատվիրատուի առաջադրանքով մատուցել վճարովի ծառայություններ (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն).

2.1.2. ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.3. ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում:

2.1.4. պատվիրատուի պահանջով _____ օրվա ընթացքում
(թվերով և բառերով)
անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:

2.1.5. թեմայի կատարման նպատակով հատկացված այլ ծախսերի սահմաններում և Պատվիրատուի գրավոր պահանջագրերի հիման վրա կատարել ֆինանսական գործարքներ թեմայի իրականացման նպատակով կամ գրավոր հիմնավորելով պահանջագրերի չիրականացման կամ մերժման պատճառները.

2.1.6. Կատարողին ժամանակին իրազեկել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեից ստացված ֆինանսական, կազմակերպչական և սույն պայմանագրին առընչվող այլ հարցերի շուրջ ընդունված որոշումների, հրամանների կամ հրահանգների մասին:

2.2. Կատարողը իրավունք ունի՝

2.2.1. հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով:

2.2.2. ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագրի կատարումից՝ առանց մյուս կողմին հիմնավորելու հրաժարվելու պատճառը:

2.3. Պատվիրատուն պարտավորվում է՝

2.3.1. վճարել կատարված ծառայությունների համար.

2.3.2. իրեն մատուցված ծառայությունների համար վճարել սույն պայմանագրում նշված ժամկետներում և կարգով.

2.3.3. ծառայությունների մատուցման համար վճարել սույն պայմանագրի 3-րդ հոդվածում նշված գնին համապատասխան, ծառայությունների հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից_____ օրվա ընթացքում:
(թվերով և բառերով)

2.3.4. աշխատանքների կատարման անհնարինության դեպքում, որը ծագել է պատվիրատուի մեղքով, ծառայությունների դիմաց վճարել լրիվ ծավալով, եթե այլ բան նախատեսված չէ սույն պայմանագրով.

2.3.5. Կատարողին հատուցել նրա կատարած փաստացի ծախսերը այն դեպքում, երբ կատարման անհնարինությունը ծագել է այնպիսի հանգամանքներից, որոնց համար կողմերից որևէ մեկը պատասխանատվություն չի կրում, եթե այլ բան նախատեսված չէ սույն պայմանագրով:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով.

2.4.2. ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագրի կատարումից՝ առանց մյուս կողմին հիմնավորելու հրաժարվելու պատճառը:

2.4.3. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմված է՝

3.1.1. Թեմայի «Այլ ծախսեր» հոդվածով հատկացված գումարի _____ տոկոսը (մինչև 8 տոկոս, որի չափը որոշում է կազմակերպության ղեկավարը), որը կազմում է _____ ՀՀ դրամ՝ թողնվում է գիտական
(թվերով և բառերով)

կազմակերպության տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թեմայի կատարումը ապահովելու համար:

3.2. Սույն պայմանագրի գինը կազմում է _____ՀՀ դրամ:
(թվերով և բառերով)

3.3. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 1.3. կետում նշված ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք պայմանագրի արժեքի _____ տոկոսի չափով և տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար _____տոկոսի չափով:

4.2. Տույժի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է _____ դատարանի քննությանը:
(դատարանի անվանումը)

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
_____	_____
(անունը, ազգանունը)	(կազմակերպության անվանումը)
_____	_____
(հասցեն, հեռախոսները)	(պաշտոնը, անունը, ազգանունը)
_____	_____
(բանկային վավերապայմանը)	(հասցեն)
	_____
	(բանկային վավերապայմանը)
_____	
(ստորագրությունը)	
	_____
	(ստորագրությունը)

Կ. Տ.

Հավելված N 3
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2012 թ. հունվարի 31-ի
N 05-Ա/Ք հրամանի

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ _____

ք. Երևան «….» _____ 2012 թ.

_____,
(թեմայի ղեկավարի զբաղեցրած պաշտոնը)
_____՝ (այսուհետ Պատվիրատու),
(թեմայի ղեկավարի անունը, ազգանունը, հայրանունը)
որը գործում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Ռուսաստանյան հումանիտար գիտական հիմնադրամի միջև համագործակցության մասին 2011թ. փետրվարի 18-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում գիտական ծրագրերի մրցույթի անցկացման կարգի հիման վրա,
_____
(թեմայի անվանումը, ծածկագիրը)
թեմայի ղեկավար մի կողմից (այսուհետ՝ Պատվիրատու), և քաղաքացի _____, (այսուհետ՝ Կատարող), մյուս
(անուն, ազգանուն, հայրանուն, գիտական աստիճան)
կողմից, (միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեից միջազգային գիտական համագործակցությանը հատկացված միջոցներից ֆինանսավորում ստացած _____
_____
(թեմայի անվանումը)
գիտական թեմայի առաջադրանքով սահմանված գիտական աշխատանքը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

2. ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՅՈՒՄ

Կատարողը ներգրավվում է _____
_____
(թեմայի անվանումը, ծածկագիրը)
թեմայի կատարման աշխատանքներին, որպես _____:
(թեմայում կարգավիճակը, դրույքը)

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Կատարողից պահանջել կատարելու աշխատանքը կամ դրանից բխող առանձին առաջադրանքները իր կողմից սահմանված ժամկետներում.

3.1.2 Կատարողից պահանջել կատարելու սույն պայմանագրի 3.4 կետով նախատեսված պարտականությունները:

3.2. Պատվիրատուն պարտավորվում է՝

3.2.1. Կատարողին տրամադրել գիտական թեմայից բխող տեխնիկական կամ գիտական այլ առաջադրանքներ և նրա հետ համաձայնեցնել աշխատանքների ծրագիրը.

3.2.2. աշխատանքների կատարման համար կատարողին տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ.

3.2.3. կրել աշխատանքների արդյունքներին հասնելու անհնարինության ռիսկը.

3.2.4. վճարել կատարողին մինչև պայմանագրով նախատեսված արդյունքները ստանալու անհնարինությունը պարզելը կատարված աշխատանքների համար, եթե դա տեղի է ունեցել Կատարողից անկախ հանգամանքների հետևանքով, սակայն սույն պայմանագրում նշված համապատասխան գնից ոչ ավելի.

3.2.5. ընդունել կատարված աշխատանքների արդյունքները և վճարել դրանց համար.

3.3. Կատարողը իրավունք ունի՝

3.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու կատարված աշխատանքների արդյունքը և վճարել դրա համար:

3.4. Կատարողը պարտավորվում է՝

3.4.1. իրականացնել պատվիրատուի նախագծային առաջադրանքով պայմանավորված գիտական հետազոտությունները և դրանցից բխող առաջադրանքները (Հավելված N 1).

3.4.2. Պատվիրատուի հետ համաձայնեցնել երրորդ անձանց պատկանող մտավոր սեփականության պահպանվող արդյունքների օգտագործման, դրանց օգտագործման համար իրավունքների ձեռք բերման անհրաժեշտությունը.

3.4.3. իր ուժերով և իր հաշվին վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տրված այն թերությունները, որոնք կարող են հանգեցնել գիտական թեման նախատեսված տեխնիկական կամ տնտեսական չափորոշիչնորից շեղումների.

3.4.4. Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների սպասվելիք արդյունքների ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին.

3.4.5. պարտավորվում է երաշխավորել այլ անձանց բացառիկ իրավունքները չխախտող պայմանագրով ստացված արդյունքների հանձնումը.

3.4.6. աշխատանքներն ավարտելուց հետո դրանց արդյունքները հանձնել Պատվիրատուին սույն պայմանագրով նախատեսված ժամկետում:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերն իրավունք ունեն հավասարապես օգտագործել աշխատանքի արդյունքները:
4.2. Պատվիրատուն իրավունք ունի օգտագործել Կատարողի կողմից իրեն հանձնված աշխատանքի արդյունքը:
4.3. Կատարողը իրավունք ունի օգտագործել իր աշխատանքի արդյունքները սեփական կարիքների համար:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Սույն պայմանագիրը կնքվում է 2 (երկու) տարի ժամկետով և գործում է 01.01.2012թ.– ից մինչև 30.12.2013թ.:

6. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Աշխատանքը ավարտելուց հետո Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է ամփոփիչ հաշվետվություն:
6.2. Պատվիրատուն ներկայացված ամփոփիչ հաշվետվության հիման վրա ընդունում է աշխատանքների արդյունքները:
6.3. Աշխատանքի առանձին փուլերի գծով պարտականությունների կատարման օր է համարվում Պատվիրատուի կողմից ընթացիկ հաշվետվության հաստատման օրը, որը հիմք է հանդիսանում փուլը ավարտելու համար:

7. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Գիտական աշխատանքի գինը համաձայն արձանագրության (Հավելված 2) կազմում է _____ ՀՀ դրամ:
(թվերով և բառերով)
7.2. Պատվիրատուն վճարումները կատարում է ըստ փուլերի: Յուրաքանչյուր փուլի ավարտին (յուրաքանչյուր ամսվա վերջին) Պատվիրատուն վճարում է Կատարողին _____ ՀՀ դրամ՝
(թվերով և բառերով)
Կատարողի կողմից կատարված աշխատանքի մասին հաշվետվության հիման վրա:

8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պայմանագրով սահմանված պարտականությունները Կատարողի կողմից լրիվ ծավալով չկատարելու դեպքում Պատվիրատուն վճարում է կատարված գիտական

աշխատանքի այն մասի արժեքի չափով, որը համապատասխանում է կատարված աշխատանքի ծավալին:
8.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողը մեկամսյա ժամկետում ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարված աշխատանքին համամասնական չափով վերադարձնում է ստացված գումարները:
8.3. Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ չեղյալ հայտարարվել միակողմանի՝ Պատվիրատուի կողմից Կատարողին նախօրոք տեղյակ պահելով 10 օրյա ժամկետում:
8.4. Պարտավորությունը խախտած կողմը պարտավորվում է մյուս կողմին հատուցել պատճառված վնասները, այդ թվում՝ բաց թողնված օգուտը:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Կողմերը պարտավոր են ապահովել պայմանագրի առարկային, դրա կատարման ընթացքին և ստացված արդյունքներին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:
9.2. Կողմերից յուրաքանչյուրը աշխատանքների կատարման ընթացքում ստացած գաղտնի տեղեկությունները կարող է հրապարակել միայն մյուս կողմի համաձայնությամբ:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

11. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

12. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1. Սույն պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ գործունեության դադարեցումը իրականացվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ:

12.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի անբաժանելի մաս են հանդիսանում

- Առաջադրանքը (Հավելված N 1),
- Պայմանագրային գնի մասին համաձայնության արձանագրությունը (Հավելված N 2):

Պատվիրատու՝	Կատարող՝
_____	_____
(ազգանուն, անուն, հայրանուն)	(ազգանուն, անուն, հայրանուն)
_____	_____
(անձնագրի սերիան, համարը)	(անձնագրի սերիան, համարը)
_____	_____
(երբ եւ ում կողմից է տրվել)	(երբ եւ ում կողմից է տրվել)
_____	_____
(սոցիալական քարտի համարը)	(սոցիալական քարտի համարը)
_____	_____
(հասցեն)	(հասցեն)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)

Հավելված N 1
N _____ պայմանագրի
«___» _____ 2012 թ.

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ _____

_____ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ

1. Պատվիրատու _____
(անուն, ազգանուն)

2. Կատարող _____
(անուն, ազգանուն)

3. Աշխատանքի փուլերը
_____
_____
_____
_____

4. Աշխատանքի բովանդակությունը
_____
_____
_____
_____

5. Արդյունքների ներկայացման ձեւը
_____
_____

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ _____
(անուն, ազգանուն)

ԿԱՏԱՐՈՂ՝ _____
(անուն, ազգանուն)

Հավելված N 2
N _____ պայմանագրի
«___» _____ 2012 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

_____

_____ թեմայով

գիտական աշխատանքի պայմանագրային գնի մասին համաձայնության

Մենք՝ ներքոստորագրողներս՝ ի դեմս Պատվիրատուի՝ _____
(անուն, ազգանուն)
եւ ի դեմս Կատարողի՝ _____, վկայում ենք, որ
(անուն, ազգանուն)
համաձայնություն ենք ձեռք բերել «___» _____ 2012թ. N_____ պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ _____
(թվերով եւ տառերով)
ՀՀ դրամ գումարի չափով:

Պատվիրատուն վճարումները կատարում է ըստ փուլերի: Յուրաքանչյուր փուլի ավարտին (յուրաքանչյուր ամսվա վերջին) Պատվիրատուն վճարում է Կատարողին _____ ՀՀ դրամ, Կատարողի կողմից կատարված
(թվերով եւ տառերով)
աշխատանքի մասին հաշվետվության հիման վրա:

Սույն արձանագրությունը հիմք է Պատվիրատուի եւ Կատարողի միջեւ փոխադարձ հաշվարկների եւ վճարումների կատարման համար:

Պատվիրատու՝	Կատարող՝
_____	_____
(ազգանուն, անուն, հայրանուն)	(ազգանուն, անուն, հայրանուն)
_____	_____
(անձնագրի սերիան, համարը)	(անձնագրի սերիան, համարը)
_____	_____
(երբ եւ ում կողմից է տրվել)	(երբ եւ ում կողմից է տրվել)
_____	_____
(սոցիալական քարտի համարը)	(սոցիալական քարտի համարը)
_____	_____
(հասցեն)	(հասցեն)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)